Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի պատասխաններ՝ 10-րդ դասարան

2. Գինարբուկներով լեցուն հովտի լուսաբացն ավետող երգասաց դեղձանիկների՝ անդորրություն պարգևող ճռվողյունը ներդաշնակվում էր պաղպաջուն աղբյուրների խոխոջյունին՝ ստեղծելով անքակտելի բնության անընտգյուտ, հոգեհմա մեղեդին: Այստեղ՝ բարձր լեռների գոգում՝ զվարթախոս գետի ափին, ուր դաշտերն էին ալեվետում մեղմ շնչշնկոցով, իսկ վարսաթափ ուռիները՝ նազում պչրանքով, բարեբեր որթատունկերի կողքին՝ փայտաշեն ու գողտրիկ տնակում, ծնողների հետ ապրում էր մի տղա: Ի հեճուկս ծնողների, որոնք սիրում էին ոչ շքեղ, սակայն ջերմ ու տաքուկ իրենց տունը, տղան անդադար դժգոհում էր. նա երազում էր ունենալ աշխարհի ամենալավ տունը:

Ու տարագրի մախաղն առած՝ մի օր երիտասարդը հեռացավ տնից՝ հոգում անթեղած ամենալավ տունը գտնելու տարիների իր փափագը:

Թափառելով աշխարհեաշխարհ՝ անցավ օվկիանոսներ ու ծովեր, լայներախ խորխորատներ ու երկնաքերծ լեռներ: Եղավ մարմարակերտ ապարանքներում, տեսավ վիմակոփ դղյակներ ու որձաքարե տներ, բայց և այնպես չգտավ իր երազած տունը. ամեն տեղ ինչ-որ բան էր պակասում:

Մի օր էլ տղան երազ տեսավ. ականակիր խավարի մեջ խաբկանքի պես ուրվագծվում էր մի համեստ տնակ՝ պատուհանից առկայծող ճրագով: Թրթռացող սրտի տրոփյունից արթնանալով՝ նա, անձկալի հայացքը սևեռած դեպի հեռուները, շշնջաց. «Ես վերջապես հասկացա՝ որն է ամենալավ տունը»:

3. Փայլփլուն-պաղպաջուն, անխզելի-անքակտելի, աննման-անընտգյուտ, տսապիյուն-շնկշնկոց, գեղգեղանք-ճռվողյուն, հարմարավետ-գողտրիկ, հակառակ-ի հեճուկս, վտարանդի-տարագիր, ուղեպարկ-մախաղ, թաքցնել-անթեղել, վիհ-խորխորատ, տեսիլք-խաբկանք, կարոտակեզ-անձկալի, բաբախ-տրոփյուն, սեթևեթանք- պչրանք:

4. Գործոն, զգոն, ջարդոն, թերթոն, լցոն, կտրոն, թափոն, ծամոն, գողոն, պաշտոն;

5. *ստորին-ստորադաս, ամենագնաց-ամենաբարի, հարված-հարակից, վերին-վերադարձ, ներքին-ներկա:*

6. *վերահաս-վերահասու, գիրգ-գիրկ-գիրք-գիրթ, ծաղկել-ձաղկել, մեղկ-մեղք, սպրդել-սփրթնել*

7. կույրաղի, թև թևի, քարեդարյան, հոգեբան-մանկավարժ, դեմ դիմաց, հյուսիսատլանտյան, շիփ-շիտակ, նորզելանդական, դուռ-դռան, գիր-գրականություն, ձեռք բերել, հնուց ի վեր, ի դեպ, հորոտ-մորոտ, անուն-ազգանուն, մերձքաղաքային, ձեռքով-ոտքով, հաստ աղիք, տանտիկին, հայր սուրբ:

8. Օրինակ՝ անցավ-անցավ, ջրի-ջրի

Գնահատման չափանիշներ – 10-րդ դասարան

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:

Ուշադրություն: Շարադրության մեջ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,5 միավոր, կետադրական, քերականական, բառագործածական և ոճական սխալների համար՝ 0,25 միավոր, սխալ տողադարձի համար՝ 0,1 միավոր: